

Գրաբարի, Արցախ – Ղարաբաղի բարբառի և արդի հայերենի շարահյուսական մի քանի ընդհանրությունների մասին:

Օ. Ե. Բարսեղյան

Հայերենի բարբառներն ու արդի հայերենը պահպանել են այն հարստությունը, որ ժառանգել են գրաբարից:

Ակադ. Զառուկյանը հայաց լեզվի հնագույն շրջանի, հատկապես նրա նախագրաբարյան փուլի համար տարբերում է վեց բարբառային գոտիներ, որոնցից հյուսիս-արևելյան բարբառը պիտի ընդգրկեր Մեծ Հայքի հյուսիս-կենտրոնական և հյուսիս-արևելյան շրջանները՝ Այրարատը, Գուգարքը, Արցախը, Ուտիքը, Սյունիքը և Փայտակարանը: Արցախ – Ղարաբաղի բարբառում պահպանվել են հնչյունական, բառապաշարային որոշ տարրեր, որոնք հավանաբար ավելի հին ծագում ունեն, քան գրաբարը: Դրանք կարելի է համարել հնագույն բարբառային արտահայտություններ, որոնք վկայում են Արցախ-Ղարաբաղի բարբառի հնդդեպյան մասին:

Ծարախյուսական կառուցվածքի տեսակետից շատ ընդհանրություններ կան գրաբարի, Արցախ-Ղարաբաղի բարբառի և արդի հայերենի միջև:

Եվ գրաբարում, և բարբառում, և՛ արդի հայերենում գործածվում են գոյականական (աղանաճողայ եղեգամբ, բանք ասացելաք, քըշըրվա արագ, պրէլ Լ՛իքթորը, հրաշք տոջիկ), ածականական (ատնիլ թշնամեաց, ինեյն գաղտնի, պատառ դօնգի, ինձանա թաթուն, ուրիշներին անկելիք), բայական (շինել անձնեակներտ, նախատել բանիւք, վրիվլիսելալ մոտենալ, վէղալ ծակել, պատուլ քաջերից), մակբայական (կարի դանդաղ, այնչափ վաղ, ստղաս հեռէ, պատառ ճէլի, շատ արագ), դերանվանական, թվականական և այլ բառակապակցություններ: Ծառ են գործածվում գոյականական ու բայական բառակապակցությունները:

Կան նախադասությունների նույն տեսակները: Բանի որ առօրյա խոսքում մարդիկ հիմնականում ձգտում են մտքներն արտահայտել կարճ, պարզ ու հասկանալի. բարբառում ավելի շատ գործածվում են պարզ նախադասություններ՝ Ծիլեճը պիտեճեք: Հոգըրթցիք պրէլ մարթիք ըն ըլալ:

Բարդ նախադասություններից ավելի շատ գործածվում են բարդ համադասական նախադասությունները: Լրծում ընք, քաքըսում վար անէլը: Վըշըմնեն ինձ ըրա տեճան, ըսկսեցեն կըծօտէլը:

Գրաբարում, Արցախ-Ղարաբաղի բարբառում և արդի հայերենում երկրորդական նախադասությունները գլխավորի հետ կապակցվում են ինչպես ստորադասական շաղկապներով (գրաբարում՝ քանզի, զի, որպես զի, մինչ զի, թեպետ, քան թէ, եթէ և այլն, բարբառում՝ ընդրա հետի, վրէ

(վէր, վրէր), էա վրէր, հանցովէր), այնպես էլ հարաբերական բառերով (գրաբարում՝ որ, ո որ, զին, ուր, ուտի, յործամ, որպես և այլն, բարբառում՝ վրէ, հիբի): Իր շարահյուսական կիրառություններով գրաբարում առանձնանում է որ հարաբերական դերանունը, իսկ Արցախ – Ղարաբաղի բարբառում հաճախակի գործածվում է թա շաղկապը ինչպես մեկնական, այնպես էլ նպատակի իմաստներով: Եւ կաննիվոլն թուփ ինչ է, որոյ սերմն նորա դնէ է: Վըլ մին աէն կըրէլիս չի լալ, թա (= որ) օլսըր խօսէ: Տըղեսա պըցըրացէ, թա (= որպեսզի) յէշիմ: Պարիկամներան էլ յէկէն, լաց իլին, վրէր սըրտընէն հուվանա: Վըլեճարը մօրթալ ըն, հանցըվրէր րէփ անին: Ասալ ըմ, հուճու գլիդա: Հիբը տըննամ, էն վիշտըր կասիմ:

Գործածվում են անկախ և կախյալ շարահարությամբ նախադասություններ: Այսպես՝ Տեղ ոսկի տնդայր ի փնսպոյթեանն Արտաշեսի, Տեղայ մարգարիտ ի հարսնությունն Մարթինկան: Եկալ ըմ, տըլեսնամ, հինչ ըս անըմ: Օգալ ըմ քըլնամ տօն: Էտ քըշըրը դըշըրիքըր յէկան, լոյս ալինք ու դանըր հըրկեցին:

Արցախ-Ղարաբաղի բարբառում հաճախ բարդ ստորադասական նախադասության մեջ որպես գլխավոր նախադասություն է գործածվում ապանի դերբայն առանց օժանդակ բայի. Տու էտքան խնլոր ըս, յէս գլիդալու (Ես չեմ իմացել, որ դու այդքան խնլոր ես): Ապանի դերբայը կարող է արտահայտել նաև նրկորդական նախադասության իմաստ: Նախագին տընալու, հարցնել լուծած ա հաշվում (Դեռ նախագահին չի տեսել, հարցնել լուծված է հաշվում):

Արցախ – Ղարաբաղի բարբառով նյութերով գեղակցում է ուղղակի խոսքը: Հիմնականում խոսքը կառուցվում է երկխոսություններով: Նկատելի է, որ մեջքերվող խոսքի դեպքում պատմողը սահմանական եղանակի անցյալ ժամանակի *ասացի* բայանի փոխարեն կարող է գործածել պայմանական եղանակի ապառնիկ կառույց:

Ուրուգյունը հըրկըվցիքն տանը. կասիմ եկք րէփ անիք:

Կասիմ՝ ըսըլականըմ, հինչ էլինի կինի. Մեջքերվող խոսքը հաճախ կառվում է թա շաղկապով, բայց մնում ուղղակի խոսք.

Ախըր ջանը տօղ ինգյած քըլնամ ա բիդի օցը. օցը թա.

Վրէր քըլնաս, կաեխ՝ թաքավերն ապառն կենա, քրագունքտ տեխալ ըս վըլեճարըն ու կուր յէրգինքումը մին տեղ ըրըժիլոխ... թաքավերն վրէպէն սանդուղեն պէջ անէլ ա տամ, թա՝

-- Հիշքան վրէպիկ օգում ա, թօղ յօր օն. տանէ:

Գրաբարում և Արցախ-Ղարաբաղի բարբառում և արդի հայերենում ենթական լինում է արագ և քաղաքայալ:

Պարզ ենթական արտահայտվում է հոլովվող խոսքի մասերով և փոխանվանաբար գործածված բառերով: Բարբառում և արդի հայերենում այն հիմնականում դրվում է ուղղական հոլովով: Էլլա

համան մարդեքը հրվարվում ըն: Վէջ մինը կարում էր դուր աս: Մուտք էլ բիդի շատ վար անինքը:

Գրաբարում ենթական կարող է դրվել ուղղական, սեռական, տրական, հագվադեմ էլ հայցական հոլովներով: Ծաղիկը երևեցան յերկրի մերում: Եւ ի բաց դարձուցեալ Հայկայ զպատգամատրսն Բիւլայ՝ խստութեամբ պատասխանեաց: Պիտոյ է ինձ յո՛վ գրեզ առ բացաւորն Պարսից Տառաշի:

-- Կամիմ գնա ինձի իշխան:

Բարբառում «ունեն» պակասավոր բայի, նաև նրա պակաս ձևերը լրացնող «իինիմ» անկանոն բայի հետ ենթական դրվում է տրական հոլովով՝ Ինձ իշալ ա, օնիմ, քյրեզ իշալ ա, օնիս, ընդա (ընդորա) իշալ ա, օն: Որոշ խոսվածքներում հանդիպում է նաև սեռական հոլովով՝ Իմ իշալ ա քրան տորընդևն:

Արցախ-Ղարաբաղի բարբառում ենթակա է դառնում նաև ինքն դերանվան հայցական հոլովը գ նախդրով, երբեմն նրանց հարադրվում են ինձ, քեզ, իրեն հայցական ձևերը՝ զինքըս (ինձ) հրվարվից, զինքըտ (քեզ) հրվարվից, զինքը (ուրան) հրվարվից, զինքը շաղ եկավ է այլն: Տարածված է ենթականների հետ սառ կամ էտ գուցական դերանունների գործածությունը: Նրանք կարծես ավելի են շնչտում, աստղական իմաստ հաղորդում: Բարբառով խոսողների մի մասը դա պահպանում է նաև գրական հայերենով խոսելիս: Այսպես՝ Ենթական, դա նախադասության գլխավոր անդամ է:

Անձնական դերանունների փոխարեն հաճախ որպես ենթակա գործածում են ցուցական դերանունները՝ Յրես ըտորան մին խաչ ըմ տամ, վերջ տա ամանս ինի: Ընդդարձք քյինում ըն, տրևներ: Լրացում ունեցող ենթական կարող է գործածվել անորոշ առումով՝ Ա՛ բայեր, ծեր հար ծանդոր հիվանդ ա:

Բաղադրյալ ենթակայի դեպքում գրաբարում բուն ենթակայի հետ հանդես են գալիս ինձեն, քեզեն, մեզեն, ձեզեն հոլովաձևերը, ինքն, ինքնին բառերը, լրացուցիչ տեղեկություն հաղորդող այլ բառեր: Հիմնականում այդպես է նաև արդի հայերենում: Դուր ողջ լերտը, եւ մեր մեզեն ողջ ենք ղիցն օգնականությամբ: Ընդհարձք քյինում մի դու էիր, եւ մի թագաւորն Յունաց: Մենք ամենքս հյուր ենք կյանքում մեր ծննդյան փաչ օրից:

Որպես բաղադրյալ ենթակա բարբառում հաճախ հանդես է գալիս նույն անձնական դերանունը կրկնված՝ մոււնք ու մոււնք կյեցենք (մենք ինքներս), տուր ու տուր կանիք: Կարելի է հասկանալ նաև I կամ II դմբը իր նեղ շրջապատով միայն մենք, միայն դուք: Բաղադրյալ ենթակա է կազմում նաև անձնական թվականների բաղադրությամբ (գրաբարը և Արցախ - Ղարաբաղի բարբառն ունեն անձնական թվականներ)՝ Տուք ըրկորան էլ լավ քո պար կյան: Խոխնքըր հրնգերան էլ կարթալ ըն:

Ենթական և ստորոգյալը հիմնականում թվով համաձայնում են, բայց տարածված է նաև

բաղադրությունը՝ Ժրջօվուրթը հրվարվալ ըն (նաև հրվարվալ ա) և այլն: Տարածված է նաև հոգնակի ենթակայի հետ եզակի ստորոգյալի գործածությունը՝ Ըրտապաւոնքնն մարարիդ ա տըրեճում: Աշկերը կըրնրից: Մըտորընէս ճարից: Հօրիքէս տուս եկալ: Հոգնակի «կան» ստորոգյալի հետ գործածվում է եզակի ենթակա՝ Խընձոր կան: Խաղող կան: Մտորոգյալը արտահայտվում է թե՛ պարզ ու բաղադրյալ ժամանակներով, թե՛ երկրորդական բաղադրյալ ժամանակներով: Երկրորդական բաղադրյալ ժամանակներով արտահայտված ստորոգյալները բարբառում ավելի շատ են հանդիպում, քան գրական հայերենում: Թարգմիթը քոն իլած ա ինիլու: Վրեր տօն ա կյան, կընեզը հէն ա ինըմ հաց թըլսելիս: Էն ա վրեր ախտըրս կյալի ինի, իմաց ա տալու:

Գոյականական և բայական անդամների լրացումները քիչ յուրահատկություններ են դրսևորում բարբառում: Գոյականական անդամի լրացումների համաձայնությունը Արցախ-Ղարաբաղի բարբառում հիմնականում կատարվում է նույն օրինաչափություններով, ինչ արդի հայերենում: Անորոշ դերբայով արտահայտված նպատական պարագան կարող է դրվել հայցական հոլովով՝ Զեղեհք յեր սաէլ, պար կյալ: Մոտմնալ բայը պահանջում է ոչ թե՛ տրական, այլ բացատական հոլովով հանգման խնդիր՝ Մոտմնալ շէնան, տանան: Գրաբարում ցնդի, ժողովողի հոգնակին միաժամանակ ցույց է տալիս տեղը, ինչպես՝ Հայք - հայեր և Հայաստան: Նման փոխանցումները ժամանակակից հայոց լեզվին բնորոշ չեն, բայց գործածական են Արցախ-Ղարաբաղի բարբառում՝ Քընում ըմ թօրքերը: Մին օրէ յրէ ու Դնրունց Արտաշը, հ'ա, մընէլ մըրէ ես Մարդունց Հասանը քյինիյիս ընք ըլալ Մալականն: Ընդունված է, որ հատկապես ստանա հատկացուցչի համապատասխան հոդը՝ Յէս իմ խանութօրնըս տըրեն ըմ տինըմ, տու վէլ քո կիծօթունըտ տըրեն տիր: Քանի որ բոլոր հոլովներն էլ հոդ են ստանում, կարող են հոդ ստանալ նաև նախադասության բոլոր անդամները՝ Մօշին քօլերը: Տօնը լըցնում ա ըլխարքիս լյավ-լյավ սարքերալը... Ըտըրանց շըրենքըր թողում չըն կէնան:

Այսպիսով, Արցախ-Ղարաբաղի բարբառը շարահյուսական մակարդակում ևս որոշակի ընդհանրություններ ունի թե՛ գրաբարի, թե՛ արդի հայերենի հետ:

О некоторых синтаксических общностях древнеармянского языка, Арцах- Карабахского диалекта и современного армянского языка.

Резюме

О. Е. Бабабян

Диалекты армянского языка и современный армянский язык сохранили богатство, которое наследовали из древнеармянского. Соответствующими фактами показываются некоторые синтаксические общности древнеармянского языка, Аршахо-Карабахского диалекта и современного армянского языка.

Գրաբարի, Արցախ — Ղարաբաղի
բարբառի և արդի հայերենի
շարահյուսական մի քանի
ընդհանրությունների մասին:

Օ. Ե. Բաբայան

Ամփոփում

Հայերենի բարբառներն ու արդի հայերենը պահպանել են այն հարստությունը, որ ժառանգել են գրաբարից: Համապատասխան փաստերով ներկայացվում են գրաբարի, Արցախ-Ղարաբաղի բարբառի և արդի հայերենի շարահյուսական մի շարք ընդհանրություններ: